Լ. օր Կիրակի. Ժե աւուր մուհասէպէ նստան իշխանք և ի մի քէսայ ժողովեցին զըստակն կնքով և գրով։

Հոկտեմբեր ամիս Բ. Պայրամ Տաճկաց. եւ ի Սուրբ Գէորգայ եկն մեր Վարդապետն ի մեր ժամս և նստաւ մեծաւ պատվով։ Եւ յաւուրս կայր Դաւիթ վարդապետ Հալպեցի ի Սուրբ Գէորգ և գտանէ յանկիւնս խցիցն զգիր և զմուսէվէտ այն գրին կաթողիկոսի, որ գրեալ էր թէ Ի սուրն Աստուծոյ կու մատնեմ. եւ ամենեւիմբ նման գրին. եւ առաքեաց առ մեր Վարդապետն, և տեսաք որ նման էր նմին և մուսէվէտ, որ աստ չինեալ եղեն զթուղթն զայն։ Եւ առաքեաց մարդ առ Մուղնեցին եւ խնդրեաց զթուղթն զայն և ոչ ետ. և ի հարցանելն սոցա, ասէ թէ Գրեցաք զայն թղթին սուրէթն թէ Հոգևորտէ՛ր, գրած թղթիդ ամէլ չարին, այլ ուրիշ թուղթ մի այլ զրկէ որ ամէլ անեն։ Ոչ հաւատացաւ բանս, այլ ի լեզու անկաւ ստութիւն բանին։ Յաւուրքս որք գին էին արարեալ, յամենեցունց ըմբռնեալ առեալ յերեք եկեղեցոյս միջի ՀՌ ըստակ (Ռեբէ)։

ԻԶ ամսոյն կաթողիկոսին թղթերն եկաւ, առաջին էր. և գրեաց թէ Որպէս Ֆռանկ ազգին սահման է՝ տարին Ա. առաջնորդ, ըստ հաստատելոյ Տեառն Փիլիպոսի երբ չհաճեցաք ի դա, դուք լաւ գիտէք, զո՛վ ոք խնդրէք՝ առաքեցից ձեզ (Ռեբէ)։

Յաւուրս եկն լու՝ զի մահացուցին ասել Մուրատ փաշան ի Շամ դեղօք զգլուխն ածիլելով, և յետ աւուրց կրեցին զգանձն առ արքայ։

Նոյեմբեր ամիս օր Եշի[1]). ելեալ Եղիազար վարդապետն ի մեր եկեղեցոյն եւ գնաց ի Պուրսայ։

1) Զշի.